

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԾԳԻՐ

ԶԱՐԲԱՅԵՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 23

“ՏԱՃԱՐ” Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԿԱՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրու
Գաւառաց համար տարեկան	40 »
Արսասանմանի համար տարեկան	10 Ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեշիքաւ, Հայոց եկեղեցի

درسماعده بتهکطاشده ارمی کلیسائیه (داجار) غزته سی مدیری پاپاس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

Զարմարճըլար, Յակոբեան խան

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Մ. Վրդ. Դալէմբարեան
2. Տ. Տիրայր Մ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Դալէմբարեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիւսարեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ


1. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուրբաս Բնյ. Պալլաճեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ.—Տ. Ռոմէն Բնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Դաֆթանեան
ԱՅՆԹԱՊ.—Տ. Դարեգլին Բնյ. Պողարեան
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Խաչատուր
Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱՔԵՐԴ.—Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բարդէն Մ.
Վրդ. Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ.—Առաջնորդ Տ. Մկրտիչ Մ.
Վրդ. Աղաւունի
ԵԴԵՍԻԱ.—Բ. Թիւրաքեան էֆ.
ԵՕԶՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ.
Փէրտանճեան
ԶՄԻՒՌՆԻԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ.
Սարգիսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Դալուստ Բնյ. Տ.
Դալուստեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ
Մ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Մ. Վրդ.
Սաւտէթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մարթոս էֆ. Թոքադեան
ԿԻՒՄԻՒԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշան-
եան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ
Վրդ. Դաւապարեան
ՄԱՆՉԷՍԹԵՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ս.
Եպիսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան

ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Բաղարատ Վրդ. Վարդապարեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ.
Տառեան
ՈՒՇՍ.Բ.—Կարապետ էֆ. Բէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ-ՊԱԼԷՔԵՍԻՐ.—Առաջնորդ Տ.
Կարապետ Մ. Վրդ. Մալլումեան
ՊԱՂՏԱՏ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքճեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Բէրթմէնեան
ՊԱՐՏԻՉԱԿ.—Յովնանէս էֆ. Տ. Կա-
րապետեան
ՊԷՅՐՈՒԹ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Եղե-
կիւլ Վրդ.
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովնանէս Ս.
Եպիսկ. Արչարունի
ՌՈՒՍՃՈՒԲ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըր-
նիկեան
ՌՈՏՏՈՒԹ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բար-
թոլ Ա. Բնյ. Թազմեան
ՍԱՄՍՈՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Մ. Վ.
Օտապալեան
ՍԵՐԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բնյ. Օտապալեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՅԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպ-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիմիսիոս Բնյ. Տրէդ-
եան
ՏԷՏԷ-ԱՂԱՃ.—Տ. Դարեգլին Բնյ. Տէօփ-
լէթեան
ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻԶ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառժա-
պետ Բնյ. Բիպարեան
ՔԷՕՄԹԷՆՃԷ.—Տ. Մաթթէոս Բնյ. Մա-
նիկեան
ՔՂԻ.—Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ.
ՅԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՅԻԷԶՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 23

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Ժամանակի պահանջը, ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԶ. ՍԱՐԳԻՍԵԱՆ. — ՄԵՐ ՎԱՆ-
ԻՍԵՐԸ, Յովակիմ-Աննայի վանք եւ զոկիոյ, ԽՈՍՐՈՎ Մ. Վ. ՊԷՂԻԿԵԱՆ. — ԿՐՕՆԱ-ՊԱՏՄԱ-
ԿԱՆ, Ստեփանոս Սիւնեցի (շար.) ԵՂԻՇԷ Վ. ԽԱՅԵՐԵԱՆ.—ՊՐՕՓ. ԳՐ. ԽԱՅԻԺԵԱՆԵՑ, ԱՏՐՈՒՇԱՆ.—
Պատմ. Հայ. Չայնագրութեան, ԱՐԻՍՏ. ՔԶ. ՇԻՍԱՐԼԵԱՆ.—Աղօթքի հրաւէր (քերթուած), ՍԱՐԳԻՍ
ՊՏԸԼԻԿԵԱՆ.—Իժրախտ հանձնարի մը շիջումը.—ԱԶԳԱՅԻՆ ԿԵՍԱՆՔԸ, Շարժուան լուրեր
եւ Ժողովոց որոշումներ:

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋՔԸ

Բաւական ատեն է որ մեր եկեղեցիին
բարեկարգութեան խնդիրը, լուրջ հանգա-
մանք մը առած, կը ծեծուի Տաճարի և
ուրիշ թերթերու մէջ: Երբեք մեզ՝ Հայ
եկեղեցւոյ խոնարհ պաշտօնեայի մը՝ ան-
կաշկանդ յայտնել մեր կարծիքն ալ:—Նախ
ըսեմ թէ չենք կարծեր որ ժամանակի պա-
հանջումներուն գոհացում կարենան տալ
Գեր. Տ. Գնէլ Մ. Վ. Ի առաջարկած բա-
րեփոխութիւնները. որովհետեւ մասնակի
են և ըստ մեզ չպիտի կրնան եկեղեցիէն
ուժացող ժողովուրդին ներշնչել աստուած-
պաշտութեան ոգին ու եռանդը, սէր
ներշնչել դէպի կրօնքն և անոր հաւատա-
լիքները թերեւ, իբրև նորութիւն, ժամա-
նակ մը կարենան ժողովուրդը հրապուրել,
բայց ի վերջոյ դարձեալ պիտի մնան պարզ
ձևակերպութիւն՝ լճացած: Դաւանց ար-
դիւնքի:

Տ. Գնէլ Մ. Վ. ու իր համախոհները
կ'առաջարկեն՝ 1. «Պատշաճ կերպով կըր-
ճատել ժամերգութեանց, մկրտութեան,
ձեռնադրութեան և ըն. արարողութիւնները»,
որպէս զի ժողովուրդը առիթ չունենայ
ըսելու թէ արարողութիւնը երկար ըլլա-
լուն պատճառաւ կը ձանձրանանք եկեղեցի
գացած ատեննիս: 2. «Այխարհաբարի վե-
րածել քարոզած և ճառերն ու խրատա-
կանները, ինչպէս նաև Պսակի խորհուր-
դին բոլոր ընթերցումները»:

Մինակ ասոնք աշխարհաբարի վերած-
ուելու են, հապա մնացածները, եթէ այդ
ընթերցումները ժողովուրդին հասկնալի լե-
զուով պիտի կատարուին ի շինութիւն հա-
ւատացելոց, միւս արարողութիւնները
կատարուած միջոցին, ժողովուրդը ներկայ
չպիտի ըլլայ, քանի որ ընթերցումներն ալ
ժողովուրդին հոգիին ու սրտին կը խօսին:

Կրօնք, եկեղեցի, արարողութիւն, ժա-
մերգութիւն եղած են նպատակի մը հա-
մար, և այդ նպատակն ալ հաւատացեալ

հողին վերացումը, սիրտին աղնուացումն ու բարոյական կեանքին շինութիւնն է։ Եթէ սաոր չծառայեն քրիստոնէական Եկեղեցիին արարողութիւնները, ամուլ դաշտի մը պիտի նմանին անոնք։ Ուրեմն մասնակի բարեփոխութիւնները, իմ խոնարհ կարծիքովս, փոխանակ օգտակար ըլլալու, աւելի փեսասկար պիտի ըլլան, կորսնցնելով Եկեղեցիին ներդաշնակութիւնը։ մաս մը արարողութիւն գործարար, մաս մ'ալ աշխարհաբար լեզուով պիտի կատարուին, և այս՝ ամենէն տգեղ բանը պիտի ըլլայ։

Գործը ասով չի վերջանար քնաւ։ Եկեղեցին ամբողջապէս եթէ բարեփոխուի, առանց անոր էական սկզբունքներուն դըպչելու, այն ատեն միայն արդիւնաւոր և օգտակար պիտի ըլլայ։

Պէտք է խոստովանիլ թէ մեր ժողովուրդը մեծ մասամբ անուշով միայն քրիստոնեայ է, առանց ըմբռնած ըլլալու Քրիստոսի կեանքը, առանց հետեւած ըլլալու Մեծ Վարդապետին ցոյց տուած պատուէրներուն։ Ս. Գիրքին վրայ գաղափար չունի, ժառանգական սովորութեան հետեւողութեամբ՝ խեղդուած ու քարացած է ձեւին ու ձեւականութեան մէջ։ Պարզապէս պիտի ըսեմ թէ, դժբախտաբար մենք՝ հոգեւորականներս՝ ծիսականութեան վարժեցուցած և անոր մէջ կըրթած ենք մեր ժողովուրդը, քան թէ Քրիստոսի կեանքին։ Ուրիշ Եկեղեցիներ միշտ զարգացումի մէջ են։ Իսկ մերը՝ հակառակ իր պատկառելի հնութեան և լայնամիտ ոգիին՝ ետ մնացած է ու չէ յարմարցուած ժամանակի պահանջումներուն։

Ըսի թէ Եկեղեցին պէտք է բարեփոխուի ամբողջապէս։ Մանրամասնութիւնը զանց ընելով պիտի ցոյց տամ հոս ատոնցմէ մի քանիները։

Կ'առաջարկեմ .

1. — Համառօտել ընդհանուր արարողութիւնը, և անոր տեղ դնել ժողովուրդը հոգեւորապէս դաստիարակող չինիչ քարոզներ։

2. — Աշխարհաբարի վերածել ժամերգութեան բոլոր ընթերցումները։

3. — Վերցնել օտարամուտ սովորոյթ-

ները, աւելորդ զարդերը, դնելով եկեղեցին պարզ և կոկիկ վիճակի մը մէջ։

4. — Բարձրացնել ամուսնացեալ կըրդերը, փրկելով զանոնք ներկայ մութացիկ վիճակէն։ Այս վերջին կէտը մեծ կարեւորութիւն ունի Եկեղեցիին բարեփոխութեան գործին մէջ։

Օտարամուտ սովորոյթներէն մէկը խաւանագիտան է, զոր կը կատարենք շատ անգամ տարուան ընթացքին մէջ^(*)։ Չեմ կարծեր թէ անիկա այլեւս յարմարի ներկայ ժամանակի պահանջումներուն և ըմբռնումներուն։ «Օրհնուած ջուր խմենք» ըսելով՝ հաւատացեալք սովորաբար կուգան կը խմեն մի և նոյն դգալով։ Քննա՞ծ ենք ատոնց բոլորին ալ առողջական վիճակը. թերեւս մէջերնին գտնուին այնպիսիներ, որ վարակուած ըլլան զանազան հիւանդութիւններէ. և մենք կամայ թէ աւանդաբար ստիպուած ենք խմցունել այդ ջուրէն՝ միեւնոյն դգալով՝ ախտաւորին և առողջին հաւասարապէս։ Ի՞նչ է այս սովորութեան նպատակը. անով ժողովուրդին հաւատքը կենդանի պիտի պահենք. բայց հաւատքը գործնականին մէջ կը կայանայ, և ոչ թէ այսպիսի ձեւակերպութիւններու կատարման մէջ։

Քահանայական դասուն և գրեթէ բոլոր եկեղեցականներուս նիւթապէս անընդունօթ վիճակը ակնբեւ է։ Մինչ այս վիճակին հասցնող պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ ծխական, նուէրի, ժամուցի դրութիւնը։ Այս տգեղ և ստորնացուցիչ դրութիւնը մեզ ամենքս ալ (ցանցառ բացառութեամբ) հլու կամակատարներ չինած է։ Այս է պատճառը որ չենք կրցած ըլլալ, ու չպիտի կրնանք ալ, Աւետարանի անկեղծ, անկաշառ և անաշառ պաշտօնեան՝ գրկելու համար մեր կոչումը, իբրեւ Քրիստոսի հաւատարիմ աշակերտը։ Մեր դիրքը, մեր նիւթական շահը չփաստուելու համար, ճշմարտութիւնն ու արդարութիւնը և մեր կոչումին նուիրականութիւնը մէկ կողմ դնելով՝ եղած ենք ընդհանրապէս կեղծիքի,

(*) Պոչոյց մէջ ամէն եկեղեցի շաբաթապէս խաւանագիտի յանուկ օր մը ունի։

չողոքորթութեան մարդը, միմիայն «ապրինք»-ի սիրուն համար:

Ասոր համար է որ քահանաները իրարու ձեռքէ ծուխեր յափշտակելու, հնքրիկներու վրայ կը մտածեն. սսոր համար է որ Մեռելոցի օրերուն մէջ գերեզմանօրհնէքի արարողութիւնը լիութելով կ'անցնին, մին միւսէն գերեզման մը աւելի օրհնելու և քանի մը դահեկան աւելի շահելու դիտումով. ի՞նչ լեզուով կը կատարուին այդ պարագային գերեզմանօրհնէքները. գիտէ՞ք: հաւատացէ՞ք որ ոչ հայերէն են, ոչ իսկ չինարէն: Ո՛չ կարգացողը կը հասկնայ ոչ օրհնել տուողը: Օ՛հ, ասոնք ցաւալի տգեղութիւններ են, որոնք քահանան ապրեցնող իբրեւ միջոց նկատուած են:

Ո՞ր Եկեղեցիի պաշտօնեաներն այսպիսի դրութեան տակ կը կատարեն իրենց հովուական պարտականութիւնները: Մէկ մ'ալ կ'ելլեն մեզմէ ոմանք անիրաւաբար զանոնք մեզի իբրեւ օրինակ ցոյց կուտան, ըսելով թէ «նայեցէ՞ք, օտար կղերք մինչեւ ուրե՛ր կ'երթայ քրիստոսի Աւետարանը քարոզելու» քառանց բազդատութեան դնելու մեր ուսմանց դիրքն ու ապրած կեանքը:

Այսպիսի դրութեան ենթարկուած քահանան բնականաբար չի կրնար հետեւիլ իր պաշտօնի պահանջումին, իր կոչումին վեհութեան. չի կրնար ծառայել կէտ առ կէտ Աւետարանի հրահանգներուն. հակառակ պարագային, կա՛մ պիտի հրաժարի իր պաշտօնէն, կա՛մ պիտի հալածուի՝ անօթի մնալն աչքն առնելով: Եւ որովհետեւ ասիկա կարելի չէ, քանի որ անդին տուն, ընտանիք, զաւակներ ունի ան, որոնք նիւթական ու բարոյական և միանգամայն մտաւորական մտուղի կ'ուզեն, վերջապէս պիտի համակերպի և իր ինքնութիւնը փոխած՝ ստիպեալ պիտի մտնէ կեղծիքի գուռաւոր դիմակին տակ:

Ահա այն ատեն է որ անիկա կը սկսի չահագործել Քրիստոսի Եկեղեցին: «Սաստելու, յանդիմանելու, մխիթարելու և սովորեցնելու» տեղ, յանցանքները ծածկելու, երեւոյթները փրկելու պիտի ջանայ, այսինչին, այնինչին քահանայները փայտաշէլու պիտի աշխատի. և պարզապէս պիտի

դառնայ մեքենայ մը, գործիք մը ժողովուրդին ձեռքը: Ասիկա իմ փորձառութեամբ է որ կ'ըսեմ. չընդունողը թող իր ձեռքը խղճին վրայ դնէ, հոգ չէ թէ ան գաւառներուն թէ մայրաքաղաքին մէջ պաշտօն վարէ:

Այս տգեղ դրութիւնը չինարար և արդիւնաւոր չէ եղած և չպիտի ըլլայ ալ, եթէ անփոխոյ մնայ: Այդ պարագային իրաւունք պիտի տրուի մեզի ըսելու թէ պաշտօնական և ոչ-պաշտօնական պատկ. մարմինները, զանազան հաշիւներու տակ, չին ուզեր որ քահանան բարձրանայ իր ողորմելի ինկածութենէն: Շատ մը զարգացած և արժանաւոր անձնաւորութիւններ եթէ քահանայ ըլլալ չեն ուզեր, ուրիշ պատճառներէ աւելի, այս դրութիւնը մէջ կը բերեն: Փոխեցէ՞ք այս կերպով ապրիլը քահանային, փրկեցէ՞ք զայն մուրացկանութենէ վարձատրեցէ՞ք իւրաքանչիւրը իր արժանիքին համեմատ՝ որոշեալ ամսականով մը Եկեղեցւոյ մատուցէն տրուած, որ անիկա այլևս տէր դառնայ իր բարձր կոչումին, իր նուիրական պարտականութիւններուն, որ ըլլայ քաջալերուած՝ սերտելու, սորվելու, յառաջդիմելու իր ժողովուրդին օգտակար ըլլալու գործին մէջ: Ահա այն ատեն Եկեղեցին տարբեր հանգամանք մը պիտի առնէ, յառաջդիմելու համար դէպի նպատակը կրօնքին, դէպի զարգացումը հոգեւոր և բարոյական կեանքին:

«Ժամերգութեանց, խորհուրդներու արարողութիւնները կրճատել և զանոնք աշխարհաբար լեզուով կատարել» կ'ըսեն. լաւ, բայց որո՞ւ միջոցաւ պիտի կատարուին այդ արարողութիւնները, եթէ ոչ քահանային. քահանային, որ մուրացիկ մըն է, որ ծիսակատար ծառայ մըն է իր ժողովուրդին առջև. հետեւաբար ոչինչ պիտի արժեն վերոնշանակեալ բարեփոխութիւնները:

Հին հագուստի մը պատուուածքին վրայ նոր կարկտան ձգելու կը նմանին այդ մասնակի բարեփոխութիւնները, որ չեն կրնար ծածկել հինին տգեղութիւնները:

Հինցած ձերունի ծառ մը, երբ այլևս

այնքան պտուղ արտադրելու ուժը չունի իր մէջ, պատուաստի մը պէտք ունի իր բունին վրայ ամբողջապէս. ապի չառ բնական է: Ժամանակը հասած է գոհացում տալու ժողովրդային պահանջումներուն: Ժողովուրդը ժամանակին հարազատ զաւակն է, որ չի կրնար խուսափիլ անոր ազդեցութենէն: Եկեղեցին ալ, իբրեւ ժողովուրդին հոգիին ու բարոյական կեանքին աղնուղծման հզօրագոյն ազդակը, կարենալու համար մնալ իր ազնուացնող բարձր դերին մէջ, անհրաժեշտ է որ օտուտի ժամանակի պահանջումին համաձայն, նպատակայարմար բարեփոխութիւններով(*):

ՄԵՐ ՎԱՆՔԵՐԸ

ՅՈՎԱԿԻՄ-ԱՆՆՍՅԻ ՎԱՆՔ ԵՒ ԴՈԿԻՈՅ

Արժ. Տնօրեն-Խմբագիր «Տաճար»ի

Երբ 1897ին Տեղապահական պաշտօնով Տրապիզոն գացի, տեղոյն առաջնորդարանին մէջ պահուած գայ նոյն Վիճակին նախորդ առաջնորդ ողբացեալ Տ. Եղիշէ Մ. Վ. Այվազեանի գիրքերն ու զոյքերը: Յետ քանակացութեան, պատրիարքական արտօնութեան եւ տեղական ժողովներու աջակցութեամբ, հանգուցեալին կտակին ոգիին համաձայն պիտի եղածը ի գործ դրի: Այն ասեւ իր յիշատակ առի դժբախտ վարդապետին գիրքե-

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲՃ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Գաիրի

(*) Եկեղ. բարեկարգութեան հարցին նուիրուած ներկայ գրութիւնը, ինչպէս եւ ուրիշ յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, կը հրատարակենք իբրեւ առաջարկներ որ խնդրոյն շուտաւարձեան կը ծառայեն: Աւելորդ է ըսել թէ այդ բոլորն ալ չեն ցոյցներ կարծիք Տաճարի խմբագրութեան, որ յայտնուած տեսութիւններէ ունեց դէմ ունի չորս առարկութիւններ, որոնք պատեն առիթով մը պիտի պարզուին: Շեշտենք միայն թէ Եկեղեցիի բարեկարգութեան խնդրոյն մէջ շատ մեծ կարեւորութիւն ունի ֆանատիզմը եւ նիւթականին եւ իմացականին բարձրացման հարցը զոր կը յուզէ յօդուածագիր Արժ. Տ. Հայրը, եւ որու մասին չորս առաջարկներ ներկայացուած էին Ադր. Պոլսէն եւ ուրիշ տեղերէ ալ: Մ. ԽՄԲ.

րուն մէջ գտնուող Եղիշէի Յովակիմ-Աննա վանքին մէկ համառօտ ձեռագիր «յիշատակագրութիւն»ը, գրուած 1841ին: Աննայն հաւանականութեամբ, նոյն փոքրիկ տեսակը Այվազեան Վ. ձեռք անցուցած է իր Եղիշէի տեղապահութեանը միջոցին: Այս արկիտի գործը՝ թէեւ շատ կանուխէն արդած էի հրատարակութեան տալ, սակայն ժամանակին ֆաղստական անկայան պարագաները եւ իմ առաջնորդական զբաղումներս ներքին զաւառներու խորները, արգելեցին առժամայեկա իրագործուած տեսնելու բաղձաւնս:

Սոյն յիշատակագրութիւնը միջակ զրաբար լեզուով մը գրուած է եւ կրնայ մեծ աստղծ մը ըլլալ Եղիշէի վիճակին զաւազանագիրքը պատրաստելու ձեռնարկողի մը: Ընթերցողներուն դիւրութիւն ընծայած ըլլալու համար հարկ տեսցի աշխարհաբարի բարգմանել նոյն ձեռագիր տեսակը խնամով եւ ընթերցողին հարազատ հետեւողութեամբ:

Բացայայտ եմ, որ Ձեր քերթին միջոցաւ զայն հրատարակելը պատշաճ պիտի նկատեմ, իբրեւ կրօնա-պատմական նիւթ մը, որ հիմնաւոր լինելով մը հիմնարկութեան եւ դարեւոր ընթացքին մէջ անոր կրած մերթ ժամ ու մերթ փայլուն իրադարձութիւնները կը խլացնեն իր մէջ, եւ շատ ճշգրիտ մէկ պատկեր կը ներկայացնեն նոյն ժամանակներուն մէջ ապրելու դասապատրուած ժողովուրդի մը եւ անոր ճակատագիրը վարող վարչութեան մը:

Աղօթակից

Պէշկերպ

ԽՈՍՐՈՎ Վ. ՊԵՂԵՆԵԱՆ

×

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Յովակիմ-Աննայի կրօնական վանքին, գրուած 1841 Յուլիս 15ին

Շատ ժամանակներէ ի վեր մեծ փափաք ունեցանք տեղ մը գտնելու Սուրբ Ուխտիս հաւասար յիշատակագրութիւնը, տեղեկանալու համար անոր նախնական հիմնարկութեանը և սկզբնաւորութեանը և կատարուած անցեալ դէպքերուն: Բայց ափսոս, մեր նախնիք կամ անփոյթ գտնուած են այս կարեւոր պատմութեան մասին, և կամ ո՛ր է կերպով մը կորստեան

մասնուած է այն . մեր բազմաքնին հետադադարութեանց մէջ կարելի չեղաւ մեր ուղածը ձեռք բերելու և հասնելու մեր բաղձանքին : Ամէն կողմէ յուսահատ եղանք , և խորհելով որ մի գուցէ մեր յետնորդները մեզի ալ մեղադրեն , ոտքտանեն , արժան սեպեցինք մեր տկարութեան չափով ձեռնարկել ինքնին այս գրութեան :

Եւ որովհետեւ անոր առաջին հիմնարկութիւնը մեզի անձանթի էր , հետեւարար ինչ որ գտանք հաւաստի գիրքերու և պատմութեանց մէջ , անոնք պիտի առաջ բերենք , և մանաւանդ ինչ որ տեսանք մեր աչքերով և լսեցինք , անոնք հոս պիտի յիշատակենք , մեր աշխատութիւնը նուիրելով մեր Փրկչին , Յիսուսի փառքին և ի պատիւ անոր ամենօրհնեալ Ծրնողին :

Հին ձեռագիր Աւետարանի մը վերջը այսպէս գրուած էր . — Հայոց 1103 թուին Սուրբ Աննայի մկրտած տեղւոյն եկեղեցիներէն մէկը քանկեցին , եւ Հայոց 1108 թուին Սուրբ Աննայի վանքը նորոգեցին . այն ատենները հարաւի կողմերէն եկող Եպարքոս մը սուրբ ուխտատեղին հիմէն քակելով կործանեց :

Իսկ Հայոց 1169 թուին վերստին նորոգուեցաւ Ս . Աննայի մկրտածանը՝ պայծառ և փառաւոր խորաններով , պատշաճաւոր սենեակներով , օժանդակութեամբ բոլոր ժողովուրդին և վերակացութեամբ Տ . Մարտիրոս բարեջան քահանային :

Սուրբ ուխտիս շինութենէն երեք տարի ետքը , Եւդոկիոյ մէջ արքունական հրովարտակով սկսան նորոգել սրբոց Քառասուն Մանկանց եկեղեցին . բայց շինութիւնը դեռ չաւարտած , Եւդոկիոյ չորսոսնա և խեղարարոյ այլազգիներն հաւաքուելով , Ս . եկեղեցիին վրայ խուժեցին և քարուքանդ ըրին , և նոյն ամբողջով Ս . Աննայի վանքը երթալով ամեն ինչ կողոպտեցին , եւ երբ փութով չկրցին քակել զայն , կրակով այրեցին բոլոր շէնքերը յուլիս ամսուան մէջ :

Ահաւասիկ այսպիսի ինչ գտանք նոյն ձեռագիր աւետարանին մէջ . սակայն նոյն Տէր Մարտիրոս բարեջան քահանան , Աս-

տուծոյ փառքին պաշտօնաւէր և նախանձախնդիր ըլլալով , անձամբ թագաւորանիստ մայրաքաղաքը երթալով , Դուռէն նոր հրովարտակ կը հանէ , և դալով վերստին կը շինէ սուրբ վանքս՝ առաջինէն աւելի պայծառ ու փառաւոր , և ինքը տարի մը վերջը կը փոխուի այս կեանքէն , երկրի վրայ թողնելով իր անունը անմահ և անթաւամ պարծանքով և փառաւոր համբաւով , և Ս . Վանքս նոյն շինութեանքներով կը մնայ մինչեւ հարիւր հինգ տարի . և կրկին Աստուծոյ կամքով կը նորոգուի , ինչպէս որ վերջը պիտի տեսնես :

Արդ՝ կը փափաքինք հոս դնել Ս . Ուխտիս նորոգ շինութեան պատմութիւնը , որ տեղի ունեցաւ արհիապանս Գէորգ Արքեպիսկոպոսին ձեռքովը : Այս մեծահամբաւ րաքունապետը , Զմիւռնիոյ գերահռչակ քաղաքին մէջ ծնելով ազնուական տոհմէ մը , ծանրաբարոյ , զրասէր և խոհական բարքով մէկը ըլլալով , կը թողու աշխարհը և կը կրօնաւորականի սիրով վառուած՝ կուգայ Մարգուանի Ս . Աստուածածին հրաշալի վանքին հովանիին ներքեւ : Որովհետեւ իր մօրեղբայրը՝ Մարգուանի Արքեպիսկոպոս առաջնորդը հոն կը զբոսնուէր . հոն ժամանակ մը մնայ մինչեւ իր ազգականն առաջնորդին մահը , որպէս տն . հայր որբ մը մնալով :

Եւ որովհետեւ , ասոր գիտնականութեան համբաւը մեր ազգին մէջ ամենուրեք տարածուած էր , որուն համար էջմիածնի Դանիէլ Սրբազան կաթողիկոսը իր աթոռը կը հրաւիրէ սիրով ու պատուով , իսկոյն հնազանդելով ճամբայ կ'ելնէ և այն ինչ իր երկու աշակերտներովը կը հասնի Եւդոկիա և կ'իջեւանի պանդոկի մը մէջ , հոն կը լսէ Դանիէլ Սրբազան կաթողիկոսին մահը և ժամանակ մը կը մնայ Եւդոկիա :

Նոյն ատենները Եւդոկիոյ առաջնորդն էր Կոստանդնուպոլսեցի Երեմիա արքեպիսկոպոսը , որ տեսնելով մեր պանծալի Ս . Հայրը , խանդաղատեցաւ անոր մեծ սիրով , որովհետեւ կանուխէն լսած էր անոր բարեւաւութեան համբաւը , որուն համար քաղաքիս մեծամեծ իշխաններուն հետ խորհուրդ ընելով , ամենքը միակամ

հաւանութեամբ հրաւիրեցին զինքը ի կարգ վարդապետութեան, և որչափ ալ առաջին անգամ անիկա հաճութիւն չտուաւ, իր անձը անարժան համարելով հոգեւոր պաշտօնի, բայց շատ մը թախանձանքներէ վերջը վարդապետ ձեռնադրուեցաւ Գէորգ անունով՝ նոյն ինքն Երեմիա արքեպիսկոպոսէն՝ Ս. Գէորգայ եկեղեցւոյն մէջ յամի Տճն. 1809ին:

Սոյն այս գերահանձար Գէորգ վարդապետը, նոյն տարին Ազգային ժողովոյ տընօրինութեամբ Ս. Ուխտիս վերակացու և վանահայր կարգուեցաւ, որ մինչեւ այն ատեն աշխարհականներու ձեռքն էր: Վանք դալով կը տեսնէ Ս. Ուխտիս բոլոր խեղճութիւնը ու աղքատութիւնը, և մանաւանդ վաղընջակերտ հին շէնքը և անոր քայքայումը աշխարհական վերակացուներու անհոգութենէն. այնուհետեւ սկսաւ ջանահասար ըլլալ և օր ըստ օրէ հոգալ անոր պայծառութիւնը՝ յորդորելով ժողովուրդը, որ մասնակցի իր արդար վաստակովը: Եւ այն օրէն մտադիր եղաւ նորոգել Ս. Ուխտիս շէնքերը, ժամանակին յաջողութեան համեմատ:

Եւդոկիացիք տեսնելով անոր հաւատարիմ ծառայութիւնը Աստուծոյ տանը և քրտնաջան աշխատութիւնը, մեծապէս անոր հետ կապուեցան սիրոյ անխզելի կապերով, և որուն համար գոհ էին և ապագային մէջ կը սպասէին վայելել Աստուածաբեր շնորհներուն քաղցրախորժ պտուղը անոր վարդապետութեանը: Այն ատենները Երեմիա Սրբեպիսկոպոս պատճառով մը Կ. Պոլիս գնաց և հոն մնաց:

Իսկ Եփրեմ Սրբազան Կաթողիկոսը, որ Դանիէլէն վերջը բարձրացած էր յաթոռ հայրապետութեան, քանիցս նամակագիր կ'ըլլայ մեր Ս. Հօր՝ Գէորգ վարդապետին հետ. զինքը կը հրաւիրէ անպաղ իր քովը Էջմիածին, իր համալսարանին համար, զոր ինքը կառուցած էր հոն, գիտութիւնը զարգացնելու համար. որուն համար հնազանդելով վեհապետին, ելաւ զնաց ասկէ, Ս. Ուխտիս վերակացութեան պաշտօնը չորս տարիներ վարելէ ետքը:

Բայց Եւդոկիոյ ժողովուրդը, ոչ նուազ տրամուկաւ՝ զրկուելով այնպիսի ժրարթուն և քաջաքարոզ վարդապետէ մը. անպարանօք Կ. Պոլիս գրեցին և բերել տուին մեր Վիճակին վրայ իր առաջնորդութիւնը հաստատող Պատրիարքական կոնդակը և օսմանեան պէրաթը, և Պատրիարքին կոնդակը յանձնելով երեւելի անձերէն մէկու մը, Ս. Աթոռը զրկեցին Սրբազան Կաթողիկոսին ուղղեալ աղերսական գրով, որ պէս զի երբեմն հոս գտնուող մեր Ս. Հայրը՝ Գէորգ վարդապետը՝ եպիսկոպոս ձեռնադրելով իր փոքր հօտին շնորհէ: Կաթողիկոսը խնդրանքի գիրը ընդունելով զինքը եպիսկոպոս կը ձեռնադրէ և ակամայ զինքը հոս կը զրկէ 1814ին:

Մեր սրբազան Հայրը՝ Գէորգ Սրբեպիսկոպոս, իր վիճակը՝ Եւդոկիոյ գաղով հաւատացեալներուն սիրտը հոգեւոր ուրախութեամբ լեցուց և անկէ վերջ սկսաւ աշաւուրջ հակողութեամբ հոգալ եւ խնամել Բրիտանիա հօտը, իսկապէս հայր ըլլալով որբերու եւ այրիներու:

(Մնացեալը յաջորդով)

ԿՐՕՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՆԵՑԻ

(Շար. նախորդ թիւէն)

«Յաղագս բնութեան մարդոյ» գիրքը, — Նիւսացի իր այս գործը զրած էր 379ին, ասոր իբր շարունակութիւն գրեց Նաեւ երկրորդ մը «Վասն մարդակազմութեան» անուն: Այս վերջին մասին հետ չփոխելով Նեմեսիոսի նոյն նիւթին վրայ զրածը՝ Գրիգոր Նիւսացիի ընծայուեցաւ Նեմեսիոսի գրութիւնը հայ գրութեաներու մէջ: Նորագոյն քննութեանց համեմատ այս գրութեան հեղինակը եպիսկոպոսն էր Եմեսայ քաղաքին յերկրորդ Փիւնիկէ, և հաւանաբար կ'ապրէր Դ. դարուն վերջերը և Ե. դարուն սկիզբները: Նաեւ՝ ըստ կարծեաց Հ. Տաշեանի՝ այս եպիսկոպոսը այն Նեմեսիոսն է, որ երբեմն հեթանոս էր և

կուսակալ Գամբաց, և որուն շատ մը նա-
մակներ գրած է Գրիգոր Նազիանզացի :
Այս գիրքին յիշատակարանին մէջ կը կար-
գանք հետեւեալ տողերը . «Յառաջին ամի
թարգմանութեան Լեւոնի (Յունաց կայսեր)
թարգմանեցան գիրք սրբոյն Գրիգորի, Նիւ-
նայ եպիսկոպոսի, իստոյգ օրինակաց, ի Կ.
Պոլիս, ի ձեռն Գալքի հիւպատոսի, և թա-
գաւորական սեղանոյ Կենառի, ի ձեռն
Ստեփանոսի քահանայի եւ քերթողի, աշա-
կերտի տեառն Մովսէսի՝ Սիւնեաց եպիս-
կոպոսի» : Արդ՝ խնդիր է թէ այս կրկին
թարգմանիչներէն ո՞րն է գլխաւորը . Սիւ-
նեցի՞ն թէ Դաւիթ : Ըստ ամենայն հաւա-
նականութեան պէտք է ընդունիլ թէ Դա-
ւիթ է բուն թարգմանիչը, եւ Ստեփանոս
միայն յարգարող եւ կարգադրող մ'եղած
է, որովհետեւ յիշատակարանին մէջ կը
յիշուի նախ Դաւիթի անունը իբրեւ զը-
խաւոր թարգմանիչ :

Այս գրքի թարգմանութեան արժէքի
մասին Հ. Տաշեանի մէկ գործէն քաղելով
կը գտնենք կարեւորը : — Ըստ Հ. Տաշեանի
թարգմանութեան լեզուն ստորին բան մ'է,
թարգմանչին գրչին ներքեւ յայտնի ճիգ
մը կը տեսնուի, առանց երբեք ուշադրու-
թիւն իսկ դարձնելու որ այդ կերպով լե-
զուն աւելի խրթնացուցած է և խառնալա-
րած, քան թէ կոկած և ճոխացուցած : Մի
քանի օրինակներ պիտի հաստատեն այս
պարագան :

Նեոմարտոս չնշառութեան կերպը բա-
ցատրելու ատեն կ'ըսէ թէ չնշառութեան
ժամանակ՝ սիրտը կ'ընդլայնի և կը նեղ-
նայ : Թարգմանիչը այս «ընդլայնել» բառին
տեղ միշտ «որոշել» կամ «տարորոշել» բառը
կը գործածէ : Յունարէն Διαστέλλω կը նշա-
նակէ որոշել, զատել, բաժնալ, ընդլայնել .
թարգմանիչը միշտ առաջին բառը կը գոր-
ծածէ, առանց ուշադրութիւն դարձնելու
իմաստին : — Ասկէց զատ հոյ մը անյար-
մար բառեր յօրինած է յունարէնին նմա-
նելով այսպէս «գիպուած», «բախտ» ըսե-
լու տեղ ըսած է «ինքնամատոյցն», որով-
հետեւ Յոյները կ'ըսեն Τῶ αὐτομάτῳ : Նոյն-
պէս «ներդաշնակութիւն» բառին տեղ
գործածած է «յօդումն» բառը, որովհետեւ

յունարէն ἀρμονία (ներդաշնակութիւն) բա-
ռին արմատն է ἀρμόν «որ կը նշանակէ «յօդ-
ուած», «յարմարութիւն» կամ «ներդաշ-
նակութիւն» :

Կան նաեւ բաւական թուով դժուարա-
հասկնալի բառեր . այսպէս «տեսութիւն»
բառին տեղ գործածած է «երեսք» բառը .
«ընդ թափանցիկան մինչեւ ցխորութիւն
ընաւորեցան անցանել երեսք», այսինքն՝
թէ «տեսութիւնը կը մտնէ մինչեւ թափան-
ցիկ իրերու խորը և կը տեսնէ» : «Տեսո-
ղութիւն» բառին այսպէս թարգմանուե-
լուն պատճառը ա՛յն է որ յունարէն Ὀψις
բառը որ հոն կը գործածուի՝ կը նշանակէ
նաեւ «տեսողութիւն» է զատ «երեսք»,
«դէմք» են . են . (1) :

Յունաբանական այս նիւթականութե-
նէն զերծ պէտք է նկատել այն կրօնական
թարգմանութիւնները, զորոնք կատարած
է Սիւնեցի, անշուշտ աւելի խնամով և
աւելի մտադրութեամբ՝ ինչպէս նիւթը կը
պահանջէր, և ասոնցմէ է Գիրք Պարապ-
մանցը :

Գիրք Պարապմանցը . — Այս գիրքը զըր-
չագրի մը մէջ կը կրէ հետեւեալ յիշատա-
կարանը . «Գրեցաւ Ս. գիրքս որ կոչի
Պարապմանց զոր արարեալ է Սրբոյն Կիւր-
դի հայրապետին Աղեքսանդրու վասն
մարդեղութեան բանին Աստուծոյ» : Ամե-
նէն նշանաւոր կտորներն են այս գրքին
«Բրիստոսի Յարութեան» վրայ գրուածը,
«վասն զղջման և արտասուաց աղօթքը» :
Ի միջի այլ թղթոց զորս գրած է Կիւրդի
զանազան անձերու, կը յիշատակուի նաեւ
թուղթ մը առ Նեստոր, յորում կը գրու-
նենք 12 նշովքներ՝ մաքուր եւ պարզ ու-
ճով թարգմանուած : Այս նշովքներուն կը
հանդիպինք նաեւ Ստեփանոսի թարգմա-
նած մէկ ուրիշ թուղթին մէջ, զոր գրած
էր Գերմանոս Պատրիարք :

Արդ՝ եթէ երկուքին թարգմանիչն ալ
Ստեփանոսն է, ինչպէս կ'ըլլայ որ նոյն
բանը մէկուն մէջ թարգմանուած կը գրու-
նենք շատ պարզ լեզուով, մինչդեռ միւ-

(1) Հ. Տաշեան, Մանր Ուսումնասիրութիւնք,
էջ 18—19

սին մէջ գրեթէ անհասկնալի ըլլալու չափ կնճռուտ։ Այս պարագան մեզի տարակուսիլ կուտայ թէ Պարագմանց գիրքը իր ամէն մասերով Ստեփանոսի թարգմանութիւնը եղած ըլլայ։

Դիոնեսիոս Արիսպագացիի գրուածը.— Արիսպագացիի գրուածը կը պարունակէ շատ մը թուղթեր ուղղեալ առ զանազանս, զոր օրինակ «Դիոնեսիոսի եպիսկոպոսի Արիսպագացուոց առ Տիմոթէոս աշակերտ Պաղոսի առաքելոյ եպիսկոպոս Եփեսացուոց՝ յաղաքս երկնայնոյն քահանայութեան»։— «Թուղթ Դիոնեսիոսի յաղագս մահուան Պետրոսի եւ Պողոսի առ Տիմոթէոս աշակերտ Պողոսի»։— Եւ դեռ ուրիշ զանազան թուղթեր։ Մեր ունեցածը կամ ընդհանրացած թարգմանութիւնը որ կը գտնուի մէկէ աւելի մատենադարաններու մէջ՝ Ստեփանոս Լեհացւոյն գործն է, հաւանաբար բուն Սիւնեցւոյն աշխատութիւնը կամ խրթնութեան եւ կամ այլ պատճառներով ընդհանրացած չըլլալով։ Այս գործը թէ՛ Սիւնեցւոյն եւ թէ՛ Լեհացւոյն ժամանակ, Պողոս առաքելալի աշակերտ՝ Դիոնեսիոս Աթենացիի աշխատութիւնը կը նկատուէր, բայց յետոյ քննադատութիւնը երեւան բերաւ այդ կարծիքին անստուգութիւնը։

Օրբէլեան Ստեփանոսի կենսագրութեան նուիրած գլուխէն անմիջապէս ետքը, ունի նաեւ ուրիշ գլուխ մ'ալ սրբոյն Մեթոտիոսի՝ Պատարայ եպիսկոպոսին՝ Դանիէլի միկնութենէն քաղուած, որուն թարգմանութիւնը կը վերագրէ Ստեփանոսի։— Աւանց ծանրանալու այն պարագային վրայ թէ Մեթոտիոս չկրնար եղած ըլլալ հեղինակը այս գրուածքին՝ վասն զի նա կ'ապրէր Գ. դարուն վերջերը, մինչդեռ այս աւելի վերջին դարու գրուածք մըն է. քանի մը տողով ըսենք անոր պարունակութիւնը։

Այս գրուածքին մէջ մարգարէական ոգով գուշակութիւններ կը կարդանք ապագային վերաբերութեամբ։ Հեղինակը առաջին տողերով կը մարգարէանայ թէ արմատաքի պիտի խլուի Պարսից թագաւորութիւնը, թէ Աստուած զօրութիւն պիտի տայ Իսմայէլի որդիներուն, Բրիս-

տոնէից երկիրները աւերելու համար, թէ Յոնները և Հայերը գերի պիտի վարուին, թէ շատեր պիտի ուրանան ճշմարտութիւնը, կենարար խաչը, Ս. Խորհուրդը և ետեւէն պիտի երթան հերձուածողներու, և վերջապէս ուրիշ բաղձապիսի փորձութիւններ՝ որոնց պիտի ենթարկուէին այս ժողովուրդները՝ Արաբացւոց ձեռքով։

Այս գրուածքը ձեռքերնիս ունինք երեք օրինակներով. մէկը՝ ինչպէս ըսինք՝ Օրբէլեանինը, միւսը Հին կտակարանի անկանոն գիրքերուն մէջ, իսկ երրորդը ձեռագրի մը մէջ։ Այս վերջինը աւելի ընդարձակ է քան միւս երկուքը։ Սա՛ ալ պէտք է գիտնալ թէ երեքն ալ ամէն մասերով նման չեն իրարու։

Գտնով լեզուին՝ մաքուր և կանոնաւոր ոճ մ'ունի. արդ եթէ ըսենք որ Սիւնեցի Պոլիս երթալէն առաջ թարգմանած էր տփկա՝ այն ժամանակ հարկ պիտի ըլլայ ընդունիլ թէ Ստեփանոս դեռ Պոլիս չգացած քաջ տեղեակ էր յունարէնի, ինչ որ հաւանական չկրնար ըլլալ, որովհետեւ եթէ իր հայրենիքը գտնուած ատեն այդքան մաքուր կը թարգմանէր, Պոլիս երթալէն վերջը, աւելի հմտացած ըլլալով լեզուին, պէտք էր նոյն բանը ընել, նոյնիսկ աւելի կատարելագործեալ ձեւով, մինչդեռ Պոլիս գտնուած միջոցին և անկէջ վերջը կատարած թարգմանութիւնները լեզուի մասին գոնէ ընդհանուր գիծերով նմանութիւն մը չունին ասոր հետ։

Հետեւաբար ըստ ամենայն հաւանականութեան պէտք է ընդունիլ թէ ուրիշ մէկը թարգմանած է այս գրուածքը և Օրբէլեան Ստեփանոսի վերագրած։

Ստեփանոսի կը վերագրուի նաեւ Պիսիդէսի «Վեցօրէք»ը ուր թէեւ Ստեփանոսի անունը չենք տեսներ իբրեւ թարգմանիչ, բայց հրատարակիչը ⁽¹⁾ կը կարծէ թէ նա եղած ըլլայ թարգմանողը, ինչ որ անհաւանական ալ չէ։

(Շարունակելի)

ԵՂԻՇԷ Վ. ԽԱՉԵՐԵԱՆ

(1) «Մեր առաջի աղաքաւ կր ի Բագմալիայի (ԽՂ. 109) գիւղացիին Սեփանոս՝ զբարգմանիչն նեմեսեայ, եւ յայս կարծիս հաստատեալ կամք ևս եւ այժմիկ, նայելով ի մեծաւորութիւն յունաբան ոճոյ երկոցունց բարգմանութեանցն»։ Հ. Արաբաս Տիոնիան, «Վեցօրէքի Դեղագայ» Պեսիկայ»։ յառաջաբան էջ 10։

ՊՐՕՑ. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹԵԱՆՑ

Ա.

Մեծանուն բանասէրը ընական է որ միայն հնագիտական մատենագրի նեղ սահմանին մէջ ծանօթ մնալու չէ, այլ համայն հայ հասարակութեան ծանօթանալու արժանի է, իր բեղմնաւոր գրական երկասիրութիւններովը:

Ի վաղուց մենք՝ թուրքահայերս՝ սովորութիւն ըրած ենք մեզի հիւր եղող արտասահմանեան կամ ուսումնայ գրագէտ անձնաւորութիւնները համառօտ ուրազծով մը պատկերել լրագրական էջերուն մէջ: Այդ պարտականութիւն մըն է. դո՛նէ լրագրական չոր տողերով ճանչնանք յարգը գրագէտ վաստակաւորաց:

X

Մխիթարեան Հայրերու բանասիրական Հանդէպներում մէջ երեւնալէն շատ առաջ, երիտասարդ հասակին Պոօֆ. Խալաթեանց 1877ին «Մշակ»ի մէջ, Ռուստոմկական պատերազմի ժամանակ Փլէվնայի առման առթիւ պատմական ու դիւանագիտական ընդարձակ յօդուած մը կը հրատարակէ. այդ իր առաջին գրութիւնը կ'ըլլայ:

Իր գրական աշխատութիւնները կը բաժնենք հետեւեալ կերպով:

Ա. Հայ գրականութեան պատմութիւն. —

1. «Դաւիթ Սասունցի» Սրուանձտեանցի հրատարակած վէպին ուսման թարգմանութիւնը, 1881:

2. «Ղազար Փարպեցի եւ գործք նորին», պատմական եւ գրական քննութիւններով. Մոսկուա 1883:

3. Ազգագրական նամակներ Սրուանձտեանցին, որոնք տպուած են ազգագրագէտ Սրուանձտեանցի «Համով - հոտով» ծանօթ գրքին մէջ, ի շարս զանազան նամակաց:

4. Ընդհանուր տեսութիւն հայ ժողովրդական հէքեաթներու մասին, ուսերէն, որ թարգմանուած է եւ հայերէն ու գերմաներէն:

5. Մովսէս Խորենացւոյ հին հայ ժողովրդական վէպը, հետազօտութիւն էմինի: Խալաթեանց զայն ուսերէնէն կը թարգմանէ եւ կը հրատարակէ «Արձագանք» լրագրի մէջ 1886ին:

6. Ծրագիր հայ ազգագրութեան եւ ազգային իրաւաբանական սովորութիւններու. Մոսկուա 1887ին:

7. Մ. Խորենացւոյ Հայոց Պատմութիւնը՝ Խորէն Ստեփանէի թարգմանութեամբ, որու վրայ «Արաքս»ի մէջ քննադատական մը կը հրատարակէ 1890ին:

8. Եղիշէի Վարդանանց Պատմութիւնը, հրատարակութիւն Խ. Յովհաննիսեանի. «Մուրճ»ի մէջ (1892) քննադատական մը կը հրատարակէ այդ առթիւ:

9. Զենոբ Գլակ, համեմատական ուսումնասիրութիւն, «Ազգային մատենադարան» ժ. Բ. Վիէննա, 1893:

10. «Եղիշէի աղբիւրների առթիւ» — «Հանդէս Ամսօրեայ» 1895ին:

11. Մնացորդաց գիրքերու տպագրութիւնը, 1896:

12. Իրանական վէպերու հատուածները Գր. Մագիստրոսի թղթերուն մէջ, Գերմաներէն 1896ին:

13. Երկու հայագէտ. Մկրտիչ Էմին եւ Քերովբէ Պատկանեան. տեսութիւններ. Զանգեանի «Եղբայրական օգնութիւն» ըսքանչելի ուսերէն հրատարակութեան մէջ:

14. Նորագիւտ Մնացորդաց գրոց հայ թարգմանութեան Լոնտոնեան օրինակը ուսերէն գրուած, յետոյ «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ 1903ին հայերէն թարգմանուած:

15. Ֆէթթէրի եւ Հ. Գէլցերի յիշատակին ուսերէն գրած. Մոսկուայի Կայսերական Հնագիտական ընկերութ. երկրորդ հատորին մէջ, 1903ին:

16. Նիւթեր հայ ազգագրութեան պատմութեան (Էմին. Ազգագրական ժողովածոյ, VII հատորին մէջ):

Բ.

Ազգային պատմութեան գրքերն եւ յղւածներն են. 1. «Հին հայոց Անգեղ աստծու մասին», IX Մոսկ. Կայսեր. հնագի-

տական ժողովածուի մէջ, հրատարակուած 1890ին :

2. Լուսարանութիւն Մովսէս Խորենացու Հայոց Պատմութեան վրայ . գերմաներէն հրատարակուած 1893ին :

3. Մ. Խորենացու Քննական ուսումնասիրութեան սկիզբը՝ Ռուսերէն, կրթական նախարարութեան ամսագրին մէջ հրատարակուած 1894 հոկտեմբերի պրակով :

4. Հայոց վէպը, Մ. Խորենացիի Հայոց Պատմութեան մէջ, փորձ աղբիւրներու ուսումնասիրութեան, մասն I հետազոտութիւն . մասն II նիւթեր : Մոսկուա տրպւած 1896 . Ռուսերէն մագիստրոսական տիւսերտասին : Նոյն թուականին հայ և օտար բանասիրական թերթերը գնահատումով խօսեցան այդ աշխատութեան վրայ :

5. «Մովսէս Խորենացի և իւր աղբիւրները և Գրիգոր Աստուածաբան» . յօդուած «Արարատ» ամսագրի մէջ 1897 Նոյեմբ. և Դեկտ :

6. Մ. Խորենացու նորագոյն աղբիւրներու մասին (Սոկրատի Եկեղեցական պատմ. և Ս. Սեղբեստրոսի վարուց հայ թարգմանութիւնները . տպ. Վիէննա Մխիթարեանց քով, 1898) :

7. Եղեւոյ Աբգար թագաւորը ըստ Մ. Խորենացու . հետազոտութիւն, Ռուսերէն ժողովածոյ ի պատիւ Պռօֆ. Միլլէրի . Մոսկուա 1900 :

8. Հին Հայաստանի մի քանի աշխարհագրական անունները և Վանայ բեւեռագիր արձանագրութիւնները . Ռուսերէն Մոսկ. Կայսեր. Հնագ. Հնկեր. թերթի II հատորին էջ. 1900 . որուն հայերէնը հրատարակուած է «Բանասէր»ի մէջ 1901ին :

9. «Արդեօք Կրեսոսի յաղթող Հայոց Արտաշէսն էր» : Գերմաներէն, յօդուած 1903ին :

10. «Հիպպոլիդեայ Տիեզեր. Ժամանակագրութեան, հայերէն թարգմանութիւնը : Գերմաներէն բանախօսուած . հրատարակուած հայերէն թարգմանութիւնը 1904 «Հանդէս Ամսորեայ»ի մէջ :

11. «Հայ Արչակունիք Մ. Խորենացու Հայոց Պատմութեան մէջ» : Դոկտորական

սխերտասին . երկու մաս . տպուած Ռուսերէն 1903ին : Զատնք Պ. Մ. Շովրեան ծանօթացուց 1904ի «Բաղմալէպ»ին մէջ :

12. Հայոց թուականին հաստատման ժամանակի առիթով . «Հանդէս Ամսորեայ»ի մէջ 1904ին :

13. Տեսութիւններ հայոց պատմութեան հին դարերու վրայ . Ռուսերէն դասախօսութիւններ : Տպ. Մոսկուա 1910 :

Պ.

Հրասարակոթիւններ Գր. Խաչաքեանցի խմբագրութեամբ . — 1. Յիշատակարան աղէտից «Գրիգորի Սլաթեցույ» . 1897. «Արարատ» :

2. «Աւետարան ըստ թարգմանութեան նախնեաց մերոց» . զրուած 887ին, լուսատիպ հրատարակութիւն գրչադրի Լազարեան ճեմարանի . ընդարձակ յառաջաբանով . Մոսկուա 1899 :

3. «Գիրք մնացորդաց» ըստ հնագոյն հայ թարգմանութեան (յասորեոյն) . նուիրուած Մկրտիչ Ա. Կաթողիկոսին հանգուցեալ հայրիկին : Մոսկուա 1899 :

Հրասարակոթիւններ նոր հայ գրականական . — 1. Դամառ Քաթիպայի բանաստեղծութիւնք . Մոսկուա . 1881 :

2. Ռափ. Պատկանեանի ընտիր երկասիրութիւնները . 2. հատոր (ոտանաւոր և արձակ գրուածեր) . Ս. Պետրք . 1893 :

3. Դամառ Քաթիպայի բանաստեղծութիւնք . աւելի ընդարձակ : Ս. Պետրք . 1893 :

Մկրտիչ Էմինի երկերուն հրասարակոթիւնները . — 1. Մ. Խորենացու Հայոց Պատմութեան Ռուս. նոր թարգմանութիւնը : Մոսկուա 1893 :

2. Էմինի հետազոտութիւնները և յօդուածները Հայ դիցաբանութեան, հնագիտութեան, պատմութեան, և գրականութեան պատմութեան վրայ : Մոսկուա 1896 :

3. Մ. Էմինի թարգմանութիւնները և յօդուածները հայ կրօնական գրականութեան . Մոսկուա . 1897 :

4. Էմինի երկերը Հայոց լեզուի, գրականութեան և Պատմութեան մասին : Մոսկուա 1898 :

5. Հանդէս յիսնամեայ Յորելեանի Մ. Էմինի. 1898 Մոսկուա:

Մ. Էմինեան Ազգագրական ժողովածոյ. հատորներու շարքը 1901—1908: Մինչեւ ցարդ հրատարակած է այդ հատորներէն եօթը գիրք:

×

Լեզուագէտ բանասէր պոֆէսորը հոս Պոլիս քիչ մնաց. իր նպատակն էր այցելել Կարինը և իր շրջակաները: Տրտալիզոնէն անցաւ Կարին, ուր տեղական ուսուցիչական հիւր մնալով կրցաւ տասներկու օրուան մէջ հայ վանքերու ձեռագիրները աչքէ անցընել ու վերադառնալ Ռուսաստան: Ապահով ենք որ տաղանդաւոր պրոֆէսորը իր բազմաթիւ գրչով օգտակար կ'ընէ իր նոր հետազոտութիւնները: Ինքը լինելով շիրակացի, օժտուած է տեղական յատկութիւններով. կորովի աշխատող մըն է, վիճող, աննկուն պատճառաբանող. գիտական և միեւնոյն ժամանակ քաղաքական և ընկերական հարցերով ջերմօրէն պարապող: Համակրելի ազնուական անձնաւորութիւն մըն է:

ԱՅՐՈՒՇԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Գ. Լ. Ռ. Ի. Ե. Ե.

(Շար. 21րդ թիւն)

Եղիա Տնեսեան. — Իր հրատարակութիւններ. — Մեարիֆի տուաչիւն զոհը. — Համբարձում Զեռչեանի ոսնագութիւններ. — Նիկողայոս Թաշճեանի աշակերտ Դաբիկ Երոնեանի. — Ս. Էջմիածին կանչուիլը. — Դեռոգ Դ. Կարողիկոսի յիշատակելի մեկ գործը. — Թաշճեանի վերադարձը եւ Արիստակեսի յաջորդելը. — Իր հեղինակութիւններ. — Անակընկալ մահը. — Յարութիւն Համբարձումեան. — Մահ Յովն. Միւհեհեթեանի:

Արիստակէսի ժամանակակից կը համարուի նաեւ Եղիա Տնեսեան՝ որ ծնաւ 1834 թուին Միջագիւղ և, թաղին վարժարանին մէջ ստացաւ իր նախնական ուսումը. ա-

շակերտած է Գրիգոր վարժապետի (յետոյ Տ. Պօղոս քահանայ) և անկէ ուսած հայ երաժշտութեան սկզբունքը: Իր պատանի հասակէն Եղիա մեծ հակում մ'ունենալով տպագրութեան արհեստին, աշակերտութեան մտաւ 1848ին՝ իր թաղին մէջ գրտնուող Արապեան տպարանը, ուր սովորեցաւ այդ արհեստին նախաշաւիղը և յետոյ կատարելագործեց Յ. Միւհեհեթեանի քով. (Հայկական Երգարան, 1909. Եղբարք Զարդարեան):

Սորա գործունէութեան ասպարէզը կ'ըսկըսի 1862 ին, Անձնուէր ընկերութեան կողմէ իբր ուսուցիչ ուղեւորելով Հաճըն: Հին երկու տարի պաշտօնավարելէ վերջը կ'երթայ Երուսաղէմ, ուր կը հրատարակէ 1864ին իր առաջին երկասիրութիւնը՝ «Բովանդակութիւն Նուագաց Հայ Ս. Եկեղեցւոյ»: Այս գործը որ եւրոպական ձայնագրութեամբ Շարականի երգեցողութիւններ կը պարունակէր, բաւական նիւթ եղաւ վիճաբանութեանց: Նիկողոս Թաշճեան առարկելով որ անոր մէջ այլափոխուած են Շնորհալիի եղանակները, կը պնդէր թէ փոխանակ Միւհեհեան տիրացու Սիմոնի բերանը ըլլալու՝ ընդհակառակն իր քմաց համաձայն յարմարեցած էր Շարականաց աստուծոյ:

Իր երկրորդ հեղինակութիւնը հրատարակած է 1874ին Կ. Պոլիս «Նկարագիր երգոց» անուամբ, որոյ մէջ կարեւոր տեղեկութիւններ կուտայ Շարականի եղանակաց և ութ ձայնի դարձուածքներուն վրայ՝ խել մը օրինակներ բերելով անոնցմէ: Կը պատմէ նաեւ Հ. Եղուարդ Հիւրմիւզեանի հետ ունեցած թղթակցութիւնը՝ Հայ ձայնագրութեան ծագման և անոր հիմնադրին Պապա Համբարձում Լիմօնճեանի մասին. իսկ ինքը կարծիք կը յայտնէ թէ մեծանուն հայ երաժիշտը իր գիւտը յղացած աստին ձայնախիշներու դրութիւնը եւրոպականէն առած է, անունները՝ թրքականէն և ձեւերը հայկական հին խաղերէն: Վերջաբանին մէջ մանրամասն նկարագրութիւնը կ'ընէ Երաժշտական Յանձնաժողովին՝ որ կազմուեցաւ 1873 Ապր. 22ին, որուն ինք ալ անդամակցած և ստեղծա-

պետած էր, նպատակ ունենալով քննել Արխատակէս Յովհաննէսեանի նոր դրու-
թիւնը շարականաց մասին (տե՛ս գլուխ Գ.) :

Տնտեսեանի վերջին հրատարակութիւնն եղան 1880 թուականին «Նուագք հայկա-
կանք» անուն պարբերական թերթերը՝ որոնք երբեմն ազգ. երգեր և երբեմն ալ Շարականաց երգեցողութիւններ կը պա-
րունակէին, և որոնց մէջ իր բաժինն ունեցած է այս տողերը գրողն ալ, (անոնցմէ մէկ քանին ձայնագրած ըլլալով) : Եւրոպական ձայնագրութեամբ սոյն թերթերն հրատա-
րակած ատեն՝ միանգամայն իր տպարանին մէջ իւրոյս կ'ընծայէր ամբողջ ազգային երգոց հաւաքածոն, առա՛նց երբէք մտքէն անցընելու որ իր մահուան պատճառ պիտի ըլլար այդ վերջին գործը :

Եւ արդարեւ, 1880 թուականին ա՛յն աստիճան խոտութիւն ցոյց կուտար Մէա-
րիֆը, որ առ հասարակ գէշ աչքով կը նայէր ատկէ առաջ հրատարակուած բոլոր գիրքերուն՝ որոնք առանց իր արտօնու-
թեան տպուած էին, թէ և այն ատեն տա-
կաւին չէր հաստատուած այդ օրէնքը : Սոյն արտակարգ հայածանքներու գլխաւոր շարժառիթներն եղած էին՝ 1878ին ի Պոլիս տպուած Յակոբ Արշաւիրի «Նոր Հայաս-
տան» և Վահան վրդ. Տ. Մինասեանի «Խօսք զՀայրենիաց» երկասիրութիւնները : Վա՛յ էր եկեր այն գրաւթառաց գլխուն՝ որ այս անասկ ազգ. հեղինակութիւններ վաճառելու մեծ ոճիւրդ գործած էին. շա-
րունակ ահ ու դողի մէջ կը տարուբերուէին անոնք՝ վախնալով որ մի՛ գուցէ յանկարծ գրաքննիչ պաշտօնեաներն իրենց կրպակը խուղարկեն :

Այս վախերն անձին փորձառութեամբ զգացած եմ, զի այդ թուականներուն գրաւթառութեամբ պարապելով մասնա-
կից էի մեր արհեստակիցներուն երկիւղին. ամենուս աչքին կը ներկայանար միշտ Յով-
սէփ Գալափեանի կրած դառն հալածանքը, որմէ խոյս տալու համար Աթէնք ապաս-
տանած էր նա : Ի՜նչ տագնապալից կայու-
թեան մէջ կ'ապրէինք այն րոնակալութեան օրերուն, Աստուա՛ծ իմ. առաւօտուն կը մեկնէինք չուկայ երթալու համար, բայց

ստուգապէս չէինք կրնար գիտնալ թէ՛ երե-
կոյեան տո՛ւն պիտի վերագառնանք թէ՛ բանտ պիտի առաջնորդուինք :

Խաագիւղի Տ. Երեմիա ծերունագարդ քահանան՝ որ 1880ին վախճանեցաւ, եթէ կարելի ըլլար, իւր ոսկերտութիւնը գերեզմա-
նէն հանելով խարոյկի պիտի դատապար-
տէին, անոր հրատարակած վերջին Տարե-
ցոյցին մէջ Հայկական վիճանչանք տպուած ըլլալուն համար, ըստ որում մահուանէն յետոյ ձերբակալման հրաման հանած էին : Եւ միթէ այս խժեժութիւնները մինչև վերջ չշարունակուեցան ամենուրեք, որոնց զո՛ւ-
ուեցաւ նաև Վահան Զարդարեան՝ յանի-
րաւի բանտարկուելով մէկէ աւելի տարի-
ներ և իր գոց մնացած խանութին համար վարձք վճարելով յու՛մպետս :

Մէարիֆի առաջին զոհերէն մին եղաւ դժբախտ Տնտեսեան՝ իր տպագրած Երգա-
րանին պատճառաւ : 1881ին ձերբակալուե-
լով բանտարկութեան դատապարտուեցաւ, ուր հակառակ իր քաջաւորջ կազմուած-
քին, չկարենալով տոկալ այդ զաղիւր մըթ-
նոլորային, թշուառութեամբ մեռաւ նոյն տարւոյ Ապրիլ 23ին :

* Արխատակէս Յովհաննէսեանի մահ-
ուամբ թափուր մնացած էր Մայր Եկեղեց-
ւոյ երաժշտապետի պաշտօնը : Համբարձում Զէրչեան՝ որ յարմար առթի մը կը սպասէր այդ բազմամարդ կեդրոնին մէջ պաշտօնա-
վարելու, սկսաւ քծնիլ Թաղ. Խորհրդոյ ազգեցիկ անդամներուն, որպէս զի շատոնց ի վեր ցանկացած այդ իւղոտ պատառը ձեռք ձգէ :

Համբարձում գիտնալով իր ուսուցչին տկար կողմը, որ դժուարին եղանակ մը ձայնագրած ատեն՝ իրեն չափ արագա-
գրութիւն չունէր, առիթ չէր փախցընել նորա աշակերտաց ներկայութեան՝ զգացը-
նել վարպետին այդ պակասը, որպէս զի այդու հասկըցնէ իր գերազանցութիւնը : Ար. Յովհաննէսեանի մահուանէն ետքը Զէրչեան աւելի չեղտեց այդ տգեղ ըն-
թացքը, իր անձնական յաակութիւնները բարձրացնելու համար : Այնպէս որ վերջա-
պէս յաջողեցաւ Զէրչեան իր փափաքին հասնիլ, Մայր Եկեղեցւոյ երաժիշտ դա-

սատուի պաշտօնն ստանձնելով զրեթէ տարի մը. բայց իր անտոնելի բնաւորութեան պատճառաւ չկրցաւ սիրաշահիլ աշակերտները, որոնք սկսան զղջալ իրենց ընտրութեանը վրայ, և հուսկ յետոյ իմանալով որ Թաշճեան Նիկողայոս վերադարձած է Էջմիածնէն՝ միաձայն հաւանութեամբ զինքն ընտրեցին իրր արժանաւոր յաջորդ Արիստակէս Յովհաննէսեանի:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԷ. ՀԻՍԱՐԼԵԱՆ

(Շարունակելի)

Ա Ղ Օ Փ Յ Ի Հ Ր Ա Ւ Է Ր

Աղօթասաց ձայն մը անուշ, հեռաւոր,
Լսեցի եւ մօտ այգուն.
Թրթռացող օդին մէջ, ձայն մ'հեշտալոր,
Նման տաղի քելերուն:

Երկինքին մէջ աստղերը դեռ պրպրուն
Լոյսերով կը փառեին.
Բայց փարդամաս արշալոյսը դողդոջուն,
Կը բախեւ դուռն երկինքին:

Ղօղանջիւնը կոչնակին, ինձ կը բուր,
Միջոցէն կը շէր.
Բաւր հնչիւնը, կարդացող միջոց հրաւեր
Ժամերգութեան պաշտելի:

Ու մրասուեր պատերէն այն սաճարին,
Հիմա փողոց արձագանգ
Չարքիֆի, հոն կը հնչէր հեշտ մեղմագին,
Տասաներով բխր բովակի:

Կը ցանկայի մութնուշիւն հոն ըլլայ,
Վերանայ սուրբ հեշտակով,
Գիշերային աղօթներու փարսաւայ
Շեշտերուն հետ հոգեքով:

Որովհետեւ ծառայի ե յոյժ հոգիս,
Խորհրդաւոր ժամերու
Օրհներգութեանց, այն օրէն երբ գայ զիս,
Մեկնասանէն ա'ջ հեռու:

ՍԱՐԳԻՍ ՊՏԸԼԻԿԵԱՆ

«ԴԺԲԱԽՏ ՀԱՆՃԱՐ»Ի ՄԸ ՇԻՋՈՒՄԸ

Արժ. Տ. Զարուայր ֆին, Կեզիւրեան

ի Պեշիկթաշ

Յաւոք շնորհիմ Զեր պատնակաւ հօր՝
Կեզիւրեան պատնակի մահը: Այժի տեսութեան ինքն գորի, սակայն միտքն ու հոգին ողորդում յոյսով, ազգին գաւազան մտաւոր շուտաւորութեան մեկ ժիւղ մշակել եղած էր, եւ կրցած էր իր կեանքը օգտակար ընծայել հանրութեան: Կ'օրհնենք իր յիշատակը, եւ մասնակից ենք Զեր վշտին:

24 Օգոս. 1910

Մնամք աղօժարար

Պատրիարք Կ. Պոլսոյ

ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ

ԽՄԲ. — Զգածուած սրտով կը հրատարակենք Ամեն. Ս. Պատրիարք հօր ցաւակցական նամակը՝ հանգուցեալ աշաղուրկ պատուելիին արժանիքին իբր գնահատութիւն մը և յարգանքի ցոյց մը որ այնքան աւելի մեծ նշանակութիւն ունի, որքան բարձր է Ն. Սրբազնութիւնը՝ իբր Հոգեւոր Պետք Թրքահայոց և իբր սիրուած զրազէտ բանաստեղծ:

Նմանօրինակ ցաւակցական զրեք կ'ստանանք ցայսօր եկեղց. և աշխարհական անձնաւորութիւններէ: Յիշենք ի մէջ այլոց Զմիւռնիոյ առաջնորդ Տ. Մատթէոս Մ. Վ. Ինճէեանի և Խարբերդի տեղապահ Տ. Գէորգ Մ. Վ. Աւանանանի փափուկ նամակները, որ կը յղացնեն հանգուցեալին արժանիքն ու գնահատելի ձիրքերը:

Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ Արժ. Տ. Արքանամ քհնյ. Էպէեան եւս ցաւակցական գրի մը հետ բաւական ընդարձակ կենսագրութիւնը յղած է հանգուցեալին. դժբախտաբար չպիտի կրնանք Տաճարի սուղ էջերէն մէկ քանին յատկացնել այդ գրութեան, — որքան ալ պաշտելի ըլլայ մեզ հանգուցեալին յիշատակը —, մանաւանդ որ անոր կեանքը՝ իր լայն գիծերով՝ պատկերացուցաւ այս սխեմակներուն մէջ: Յիշենք միայն թէ հանգուցեալը հմուտ էր

նաեւ արեւելեան երաժշտութեան, որուն զփռարակնճիւ չափերուն (ռաւոյ) ծանօթ էր և դիւրութեամբ կը զարնէր այդ չափերը: Հմուտ էր նաեւ արաբական տաղաչափութեան արուեստին (իշմը ա'րուզ), և իր հեղինակած թուրքերէն քերթուածները (ղազէր, պէյթ) գնահատուած էին ոչ միայն գրագէտ-հրապարակագիր Ահմէտ Միտհաթ էֆ.է. այլեւ հանգուցեալ Մուալլիմ Նաճի էֆ.է. և Ահմէտ Բասիմ պէյէ, որոնց հետ անձնական ծանօթութիւն եւս ունէր: Պատիւն ունեցած էր մանաւանդ ներկայանալու Բարձր. Մէհմէտ Բէշատ էֆ.ի (այժմ վեհափառ և բարեսիրտ Ինքնակալն սահմանադրական թուրքիոյ) և գնահատուելու: Ահմէտ Միտհաթ էֆ., «Ավրօբատա պիր ճէվէլան» անուն ճանապարհորդական ընդարձակ գործին մէջ հանգուցեալին մասին կը խօսի խիստ գնահատական տողերով: Արժ. Տ. Արրահամ քհնյ. որ այս պարագաները կը յիշեցնէ մեզ, շատ տարիներ աչակերտած ըլլալով հանգուցեալին, մեծապէս օգտուած է անկէ՝ թէ՛ հայերէնի և թէ՛ թուրքերէնի և իր տաղաչափութեան մէջ:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօն. Ժողովը այս տարի ևս հարկ համարեց գիտնալ թէ կրօնի ուսումը անխափան կ'ուսանողութիւն մայրաքաղաքիս ազգային երկսեռ վարժարաններուն մէջ. եթէ կ'աւանդուի, որոնք են նոյն դասը տուողները:

Ըստ այսմ կը յանձնարարենք Ս. Եկեղեցեաց Գեր. Բարոյիչներուն, Արժ. Աւագերէցներուն և Պատ. Թաղ. Խորհրդոց՝ պահանջուած տեղեկութիւնները փութով հաղորդել Պատրիարքարանիս:

ՄԱՐԿԱՏ ԵՊԻՍԿՈՍՈՍ

23 Օգոստ. 1910

ՊԱՏՐԻԱՐԷ Կ. ՊՈԼՍՈՅ

ԵՂԻՇԷ ԵՊՍ. ԳՈՒՐԵՍԵՆ

★ ★

ԽԱՌՆ. ԺՈՂՈՎԸ ԴՆ. օրուան նիստին մէջ զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով. — Պատրիարքարանի դիմումներուն վրայ, տարեկան 23 հազար ոսկիի գումար մը խոստացուած էր կառավարութեան կողմէ Կիլիկիոյ որբերուն և այրիներուն խնամածութեան համար, և այս գումարէն տասը հազար ոսկին վճարուած էր նախորդ օրը Պատրիարքարանի: Ժողովը գոհութեամբ լսեց այս տեղեկութիւնը, և սկզբունք ընդունելով նոյն գումարը միմիայն յատկացրնել Կիլիկիոյ որբերուն խնամածութեան և այրիներու դուր հայթայթելուն, ինչ ինչ անօրինութիւններ ըրաւ և գործադրութիւնը յանձնեց Բաղ. Ժողովին: — Տ. Սըմբատ Մ. Վ. Սաատէթեան հեռագրով մը հրաժարած էր Խարբերդի առաջնորդական պաշտօնէն. նոյնպէս Տ. Գէորգ Մ. Վ. Ասլանեան կը հեռագրէր թէ իր տկարութեան պատճառով Պրուսա պիտի երթայ և հետեւաբար չէր կրնար ստանձնել Բաղէի առաջնորդական պաշտօնը: Ժողովը ուշադրութեան առաւ խնդիրը և ընդունեց անոնց հրաժարականները, և որոշեց առաջնորդական նոր ընտրութեան հրահանգ տալ, Կրօն. Ժողովին յանձնելով նոյն երկու Վիճակաց համար կազմել ընտրելեաց եռանունցանկը: — Ռոտոսդոյի Գաւառ. Վարչութիւնը գրով մը մտադրութիւն յայտնած էր յետաձգելու առ այժմ Վիճակին առաջն. ընտրութիւնը. բայց Ժողովը դիտելով որ կարելի չէր նոյն Վիճակը երկար ատեն անհովիւ թողուլ, որոշեց յանձնարարել Գաւառ. Վարչութեան, որ նախորդ հրահանգին համաձայն կատարէ առաջն. ընտրութիւնը: — Տ. Անանիա վրդ. Հազարապետեան գրով մը յանձն կ'առնէր ուղեւորիլ Բաբերդ, պայմանաւ որ Վիճակին Ժողովները վերակազմելէ վերջ վերադառնայ Պոլիս: Ժողովը հաւանեցաւ Տ. Անանիա վրդ.ի խնդրանալ, և արտօնեց զինքը առժամաբար իրեն պատր. պատուիրակ երթալ Բաբերդ: — Երուսաղէմի միաբաններէն Տ. Հմայեակ վրդ. Երէցեան գրով մը յանձն կ'առնէր ստանձնել իր ընազաւատին՝ Սասնոյ հովուութեան պաշտօնը, և կը ներկայացնէր ինչ ինչ առաջարկութիւններ: Ժո-

ղովը հարկ դատեց ստանալ այս առաջարկութեան մասին Մշոյ Առաջնորդին կարծիքը, և ըստ այնմ հարկ եղածը ի գործ դնել:

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԼ ԴՆ. ի նիստին մէջ հետեւեալ եռանուն ցանկերը պատրաստեց առաջնորդական ընտրութեանց համար. — 1. Սարգեղ՝ Տ. Գարրիէլ Եպ. Ճէվահիրճեան, Տ. Վարդան Ծ. Վ. Գապարեան և Տ. Շահէ Վ. Սահակեան. 2. Բաղէշ՝ Տ. Յակոբ Եպ. Աշոտ, Տ. Վահան Ծ. Վ. Յակոբեան և Տ. Սուրէն Վ. Գալէմեան: 3. Բարեղ՝ Տ. Վոհրամ Արքեպ. Մանկունի, Տ. Անանիա Վ. Հաղարապետեան և Տ. Եղնիկ Վ. Պապեան: — Պրուսայի Առաջն. փոխ. Տ. Վարդան Ծ. Վ. Գապարեան, Սեւանիկի հոգեւոր տեսուչ Տ. Կարապետ քահանայ Թուխմանեան, Վանայ եօթը քահանաներ և Բերսպի Տօքթ. Մանուէլ պէյ Իւթիւճեան Եկեղեցական, ծխական քարեկարութեանց մասին առաջարկներ ներկայացուցած էին: Ժողովը որոշեց Եկեղեցական Համագումարին ուշադրութեան յանձնել զանոնք: — Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետը Պաղտատար Կիւլիստանեանի և կնոջը տրիկին Զապէլ Ռիզէլեանի ամուսնութիւնը հայրապետական կոնգակով լուծելով երկուքին ևս վերամուսնութեան հրաման տուած էր: Ժողովը որոշեց փոխանորդարանի յանձնել՝ կաթողիկոսական վճիռը հաղորդել երկու կողմին ևս:

ՍԻՍԷՆ հասած թղթակցութիւններ կը ծանուցանեն թէ Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Սահակ Կաթողիկոս տասն ամսուան բացակայութենէն ետքը դարձած է իր Աթոռ: Իր հոգածութեան գլխաւոր առարկան պիտի ըլլայ վանքին ներքին կազմակերպութիւնը ի վրուխ հանել, նաև կազմակերպել ժառանգաւորաց վարժարանը որուն համար տղաքներ ալ պատրաստուած են: Ն. Ս. Օծութեան օգտաւատ ձեռնարկները որ Կիլիկեան արհաւիրքին հետեւանօք խանգարուած և ընդհատուած էին, ի գլուխ հանելու համար ապահով ենք թէ ամէն կողմէ լուրջ օժանդակութիւններ չպիտի պակսին:

ՀԱՅԵՐԷՂ ԼԱՏԻՆԱՅԵՆԼՈՒ համար, Լատին կրօնաւորներու կողմէ Բէսապի և Ան-

տիոքի չըջակաները ձեռք առնուած միջոցներուն դէմ բողոքած է Պատրիարքարանը, թագրի մ'ուղղելով կառավարութեան: Հալէպի առաջնորդ Տ. Շահէ Վ. փբիմումին վրայ, կուսակալ Ֆախրի փաշա դիմած է տեղւոյն Ֆրանս. հիւպատոսին, և հեռագրած է արտաքին գործոց նախարարութեան, որպէս զի հեռացնել տայ այդ եկեղեցականները: Ազգ. Պատրիարքարանը ու է օտար դաւանութեան դէմ բողոքած չէ կառավարութեան, սակայն ժողովրդեան թշուառութիւնը չահագործելու այս անխիղճ միջոցներն այնքան սրտի կը դպչին և այնքան հակաքրիստոնէական արարքներ են, որ հարկ եղած է այսպիսի դիմում մ'ընել:

ՍԻՍԻ ՄԷՋ ԿԱԽԱՂԱՆ ՀԱՆՈՒՈՂՆԵՐԸ. — Շէյխամի գիւղացի Ձէյնէլ օղլու Հապիպ և Ճաֆէր ալա օղլու Անմէտ վայրագօրէն սպաննած էին Կարս գաւառակին մէջ փերեղակութիւն ընող Հաճընցի Կէօկէճեան Գրիգորը և Տավուտեան Եփրեմը: Ոճրագործները, որոնք մահուան դատապարտուած էին, անցեալ ուրբաթ գիշեր Սիսի շուկային մէջ կախաղան հանուեցան:

ՆՇԱՆԱՆՈՍՈՒԹԵԱՆՑ առթիւ անցեալ ԵՂ. օր բուական բազմութիւն կար Ազգ. Պատրիարքարանի մէջ, ու դժբախտաբար անհամաձայնութեանց ու վէճի ձայներ ալ կը բարձրանային Տնտես. Խորհրդոյ որոշման հետեւանօք, որով կը պնդուէր Ծոնոց խաչ առնողներէն չորս տարուան ազգային տուրք վճարել անպատճառ: Պատրիարքարանի պաշտօնականներն անդդուելի կը մնային իրենց պահանջումին մէջ, քանի որ իրենց համար գծուած հրահանգ մը կար բացորոշ: Դիտելին այն է թէ, որչափ կը յիշենք, Տնտես. Խորհուրդին այդ կարգադրութեան դէմ ինչու ժողովոյ մէջ քահանայ անդամոց կողմէ եղած լուրջ ու բանաւոր դիտողութեանց, և նոյն ժողովին՝ նշանախօսութիւններն առաջուան ցուցակին և սովորութեան համաձայն կատարուելուն և ժողովրդեան դիւրութիւն ընծայուելու որոշման հակառակ, Տնտես. Խորհուրդին

այդ որոշումը կը մնայ անփոփոխ: Կը գովենք նոյն Պատ. Խորհուրդին ջանքերը՝ Պատրիարքարանի երկտական վիճակին կանոնաւորման, Կեդր. Սնտուկին հասոյթից յաւելման ևն. համար, որով կը յուսանք թէ ասկէ վերջը տեղի չեն կրնար ունենալ Ազգ. Պատրիարքարանի պաշտօնէութեան մաքուր համբաւն արատաւորող անկանոնութիւններ և զեղծութիւններ: Բայց սնտուկին լեցուիլը միակ նպատակը չէ և չի կրնար ըլլալ Ազգ. Պատրիարքարանին համար, որ բարոյական, հայրական դեր մը ունի կատարելիք ժողովրդեան համար, և իր պարտաւորութիւնն է նպաստել ժողովրդեան բարոյական կեանքին, որուն հիմն ու առանցքն է ամուսնութիւնը: Հետեւաւ ալ բացարձակ անհրաժեշտութիւն մ'է ամուսնութեանց տօթիւ չարդել Ազգ. տրոց այդքան մեծաքանակ գանձման վրայ: Ուրիշ շատ առիթներ կան այդ տուրքն ստիպողաբար գանձելու, ինչպէս կալուածի առու ծախ, ժառանգութիւններ կամ պահովագրական գումարներ ձեռք անցընելու համար խնդրուած ծնողեան և մահուան վկայագրեր, ևն. ևն.: Մնաց որ այդ տրոց ստիպողաբար գանձման պահանջումը՝ նպատակին բոլորովին խոտորնակ արդիւնքներ ալ կուտայ. քանի որ կը դառնան այնպիսիներ, որ պահանջուած գումարէն խրաչելով, կը յաջողին իրենց պատկանած թաղ. Խորհուրդէն չքաւորութեան վկայագիր բերել, չվճարելով ոչ միայն ազգ. տուրքը, այլեւ նշանախօսութեան սովորական ծախքը, զոր կարելի պիտի ըլլար գուցէ գանձել իրենցմէ:

Միւս կողմէ չենք հասկնար թէ այնպիսի ժամանակի մը մէջ, երբ եկեղեցական բարեկարգութեան խնդիրը կը յուզուի, և այդ կարգին մասնաւորապէս կը շեշտուի քահանաներու նիւթական և իմացական մակարդակին բարձրացման անհրաժեշտութիւնը, ինչ շարժառիթով պսակ դրամի գանձումը կ'ուզուի անջատել նշանախօսութեան ծախքերէն, և քահանան թողուլ ժողովրդային կամայականութեան ենթակայ: Այս կերպով միակ պաշտպանութիւնը զոր Պատրիարքարանը կ'ընձեռէր քահա-

նայութեան, կը զլացուի վերջապէս: Եւ կը պահանջուի որ կարող, զարգացեալ անձեր սիրով ընդգրկեն քահանայութեան փշալից տապարէզը...:

Ս. Դ. ՀՆՁՍԱԿԵԱՆ կուսակցութիւնը Տաճկաստանի իր առաջին պատգամաւորական ժողովին մէջ տուած է ի մէջ այլոց սա ուշադրաւ որոշումը. — «Կուսակցութիւն» նկատելով որ իբր Միջազգային Ս. Դեմօքրատիայի մէկ հատուածը՝ իրեն համար Կրօնը խղճի գործ է և բացարձակ ու անբռնաբարելի տիրապետութիւնն իւրաքանչիւր մարդու ներքին աշխարհին: Նրկատելով որ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան ծրագրով բոլոր հիմնարկութիւնները պիտի պահպանուին միայն իրենց հետեւորդներուն օժանդակութեամբ, որմէ տրամաբանօրէն կը հետեւի թէ կրօնական հաստատութիւններուն չհետեւող և չօժանդակող մարմիններն իրաւապէս թէ բարոյապէս ո'չ մէկ իրաւունք ունին բռնի միջոցներով այդ հիմնարկութիւնները դարձնել իրենց գաղափարներու տարածման կամ նպատակներու մարմնացման միջոց. նկատելով նաեւ որ եկեղեցիները դարձնելով ներակ ուժերու և հակամարտ ձրգտումներու յոռի թատերաբեմ մը, մէկ կողմէն ժողովրդեան լայն խաւերու մէջ առաջ կուգայ հակայեղափոխական տրամադրութիւն և հակաստիպիւղական հոսանք, կուսակցութիւնս վճռականապէս կ'արգիլէ բոլոր ընկերներուն, իր մարմիններուն ու կազմակերպութիւններուն՝ եկեղեցիներն և առհասարակ զուտ կրօնական հանգամանք ունեցող հաստատութիւնները դարձնել յեղափոխական և սօցիալիստական գործունէութեան թատերաբեմ կամ միջոց մը իր նպատակին համեմու համար, որով Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան համար, ըստ էութեան «բաց ու գոց» ի խնդիր այլեւ գոյութիւն չի կրնար ունենալ»:

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՀՄԱՅԵԱԿ ԲԶՆՅ. ԷՔՄԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐՄԱՅՐ ԲԶՆՅ. ԿԷՋԻՐԵԱՆ

ՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
Զաւմաճըլար, Յակոբեան խան

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՀԵՌԼԵԱՆ

ԱՍԱՄՆԱԲՈՅԺ

(Վկայեալ Կայսերական քոչկական վարժարանէն)
Պեշկիրաշ, Հայոց եկեղեցիին ճիշդ դիմացը:

Կը դարմանէ ակուայի եւ լինտերու
ամէն տեսակ հիւանդութիւններ. կը շինէ
քնականին յար եւ նման ակուաներ քառ-
ջուրի կամ ոսկի փրաֆի վրայ: Չափէն աւելի
փտած ակուաները քուռոնէ կ'ընէ. կը շինէ
նաեւ dent à pont ամբողջ ոսկիէ կամ
քոնսրլենէ:

Հիւանդ կ'ընդունի ամէն երեկոյ ժամը
12էն մինչեւ 3 (Ը. Թ.): Ուրիշ ատեններ
մասնաւոր ժամադրութիւն:

Կիրակի օրերը մինչեւ կէս օր ձրի:

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Բաժանորդներէն անոնց որ դեռ չեն
դրկած իրենց բաժնեգինը, վերստին կը
յանձնարարենք փութացնել իրենց հաշիւին
կարգադրութիւնը. հակառակ պարագային
քերթին առաջումը չի կրնար շարունակուիլ:
Նոյնը առաւել եւս կը յանձնարարենք
Պատ. գործակալներուն: Տարին լիննալու
վրայ է: Դրամի առաքման լաւագոյն մի-
ջոցն է մանսա-բօսը, ամէնէն պզտիկ գու-
մարէն սկսեալ մինչեւ մեծագոյն գումար-
ները: Թղթատարական փուլ զրկողները
պէտք է 40 զրշ. փ փուլ զրկեն (ե ոչ թէ
38 զրշ. փ), ե առաւելապէս երկու փառա-
նոց, որովհետեւ 20 կամ 40 փր. նոց փու-
լի այնքան պէտք չունինք, ե այստեղի
նամակատունները չեն փոխեր: Փոխանա-
կազրով կամ Պոլիս այս կամ այն տեղէն
գանձելու յանձնարարութիւնք դժուարու-
թեանց կամ յապաղումներու տեղի կու-
տան:

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Վիեննական Հայրերու հետալից հրա-
տարակութիւն, նուիրուած Հայ բանասի-
րութեան, Հայ պատմութեան, եւն. քրն-
նական ուսումնասիրութեան: Ներկայ տա-
րեջրջանին հոգ տարուած է մասնաւորա-
պէս ժողովրդային պահանջներու ալ գոհա-
ցում տալու: Տարեկան բաժնեգին՝ 15 ֆր.
կամ 6 ռբ.: Մէկ թիւ 1.50 ֆր.: Հասցէ՝
Rédaction de la Revue «Handess Am-
sorya» VIENNE VII/2, Mechitharisten-
gasse 4.

Հրատարակուեցաւ Սեպտեմբերի թիւը:

ՀՄԱՅՆԱԿ ԲԱՀԱՆԱՅ ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏԱՐԵՐՔ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՂՈՒԻ

Ա. Բ. Գ. հատոր

1/30 զեղշ

Կեդրոնատեղի՝ Սիւմպիւլիւ խան Փափազ-
եան գրատուն:

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՏՈՀՄԱՅԻՆ ԱՅԳԱԼՈՅՍ, Արշակունի
Օրիորդին Արկածները. գրեց Մեարոպ Վ.
Ուղուրեան.— Վիպասանութիւն հետալից
տեղեկութիւններով, ե հետաքրքրաշարժ
ու մերթ զուարճալի պարունակութեամբ,
գնահատուած Հայ-հռոմէականաց նախորդ
Կ. Պատրիարք Տ. Պողոս-Պետրոս ԺԱ. է:
Գին 20 զրշ.:

ՏԲԹ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

ՈՒՐՈՒԱԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ,
Ի սկզբանէ մինչ ցԱրշակունի Հարսութեան:
Բ. Տպագր. Վենետիկ: Գին 5 զրշ.:

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԿՐՕՆՆԵՐԸ, Բ. Տպագր.
Կ. Պոլիս.— Գին 6 զրշ.:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ
ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— Սզգ. վարժարանաց
համար պատրաստուած դասագիրք մը: 128
էջ, 55 կազմախօսական ընտիր պատկերներ:
Գին 5 զրշ.: